Իշխանասար

Բնակչություն՝ 147

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 101 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 8 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Գտնվում է Իշխանասարի ստորոտին, հայկական հին բնակավայրերից է: Այդ են վկայում գյուղի շրջակայքում գտնվող «Ղարայի ժայռ», «Քյալափա-Քյարավեկ», «Սյունի բերդ» ամրոցների ավերակները, միջնադարյան գերեզմանոցները:
Մինչև 1988թ. բնակեցված էր ադրբեջանցիներով: Նրանց արտագաղթից հետո, 1989-92թթ. այստեղ հիմանակնում բնակություն են հաստատել Ադրբեջանից բռնագաղթված հայերը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 75 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 219 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 550գլուխ,
- խոզեր՝ 25 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 159:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 430 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3653 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3591 հա, որից՝
- վարելահող՝ 746 հա, խոտհարք՝ 20 հա, արոտ՝ 1681 հա, այլ հողատեսք՝1144 հա
- բնակավայրերի հողեր՝ 40 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 7 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 7 հա,
- ջրային հողեր՝ 5 հա